

Էդուարդ Լ. Դանիելյան
դասմ. գիտ. դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայոց բնադասնական միջավայրի դաճադանության
գիտական առաջադրանքը

Հայոց ազգային աշխարհընկալման հիմքում Հայաստանն է՝ որպես մեկ ամբողջություն, և իր բնապատմական միջավայրը բնութագրող հայկական տեղանունները: Հայոց հայրենիքի Հայք-Հայաստան անվան արմատն է՝ անվանադիր-նախնի Հայկ նահապետի մարմնավորմամբ՝ հայ էթնիկ անունը՝ որպես իր բնօրրանում հայ ժողովրդի բնիկ-մշակութակերտ ծագումնաբանության վկայություն:

Հայք-Հայաստան-Արմենիա երկիրը հնագույն ժամանակներից Հայոց ազգաբանության, լեզվի, պետականության և քաղաքակրթության բնօրրանն է², ինչի վկայություններն են վաղ երկրագործությունը և մետաղամշակությունը, քաղաքաշինությունը և տաճարաշինությունը, տիեզերագիտական, պաշտամունքային, տոմարական, կենցաղային ու առասպելաբանական տարրեր արտացոլող ժայռապատկերներն ու քարե աստղադիտարանները, վիմագրությունը: Հայաստանի (Մեծ Հայք՝ 320 հազ. կմ², Փոքր Հայք՝ 80 հազ. կմ²) պատմական աշխարհագրությունը հայ ժողովրդի էթնո-հոգևոր արժեքների հիմնաքարն է, ինչը որպես հաստատուն մեծություն՝ հարատև ներկա է ազգի կյանքում:

Հայկական լեռնաշխարհի բնապատմական միջավայրը բնութագրող պատմաաշխարհագրական հասկացությունների՝ տեղանունների համակարգը կազմում է բնիկ հայ էթնիկ մտածողության առանցքային շերտը, որի անադարտությունը օտար ոտնձգություններից պաշտպանելու առաջադրանքը նաև տեղեկատվական անվտանգության հիմնախնդիր է³:

Պատահական չէ, որ հայկական խնդիրների շուրջ միջազգային ատյաններում ծավալվող բանակցություններում օտարները խուսափում են մեր երկ-

¹ Սովետ Խորեռնացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 37:

² D. M. Lang, Armenia: Cradle of Civilization. London, 1970.

³ Տե՛ս Է. Դանիելյան, Վ. Թաիրյան, Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները. - «Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», Երևան, 2004, էջ 6-12:

թիվ 1(26) ասպրիլ-հունիս 2009

համահայկական համոթես

ՎԻՄ

րի պատմության ու աշխարհագրության խորքային ըմբռնումից: Թերևս նրանք լավ են գիտակցում Հայաստանի ու նրա հետ քաղաքական խնդիրներ ունեցող հարևանների պատմական անցյալի, մշակութային ժառանգության և այլ չափորոշիչների անհամեմատելի լինելու փաստը: Մինչդեռ ժամանակ, Հայաստանի ու հայության դեմ տեղեկատվական պատերազմ վարող Թուրքիայի ու Ադրբեջանի ապատեղեկատվական գործողություններում հսկայական բաժին ունի պատմական փաստերի ցենզափոխումը, ինչը նրանց քոչ-վոր նախնիների ագրեսիվ վարքագծի տեղափոխումն է քաղաքականությունից՝ պատմագիտության ոլորտը: Առ այդ Թուրքիայի պետական քաղաքականության զինանոցում առկա է իր կողմից զավթված Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի (Հայոց բնաշխարհի մասը կազմող Կիլիկիայի տարածքը Հայկական թագավորության ժամանակ՝ մոտ 40 հազ. կմ²) պատմության և պատմական աշխարհագրության ցենզափոխման ծրագիրը:

Հայկական հողերի մեծ մասը ցեղասպանությամբ (19-րդ դ. 90-ական թթ. - 1923թ.) զավթման փաստը քողարկելու նպատակով թուրքական հանցագործ պետությունը 1915թ. Մեծ եղեռնի ժամանակներից միջազգային ասպարեզը հեղեղել է ստով և կեղծիքով⁴, որի տարածումը ահռելի չափերի է հասել 1965 թվականից Մայր Հայրենիքում և հայկական Սփյուռքում հայոց պահանջատիրության վերելքի, ինչպես նաև՝ 20-րդ դ. վերջին և 21-րդ դ. առաջին տասնամյակում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց: Դրանով Թուրքիայի կառավարողների պատվերները կատարող «ակադեմիական շրջանակները» նույնպես կանգնել են ցեղասպանություն հանցագործությունն իրականացրած դահիճների շարքում: Ցեղասպանական գործողությունների և պատմության կեղծարարության ասպարեզում իրենց ավագ «եղբորից» հետ չեն մնում 1918-1920 և 1988-1991թթ հայկական ջարդերը իրագործած թուրք-«թաթար»-«ադրբեջանական» ոճրագործները ու նրանց ներկա «գիտնական» և քաղաքական «փաստաբանները»:

Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի ու հայության դեմ սանձազերծված բացահայտ տեղեկատվական պատերազմի բաղկացուցիչն է հայկական աշխարհագրական անվանումներին հայտարարված «քարտեզագրական պատերազմը»⁵:

Պատահական չէ, որ Հայաստան, Հայկական լեռնաշխարհ և այլ հասկացությունները աշխարհի քարտեզներից ջնջելու համար Թուրքիայի կառավարողների գործադրած հանցավոր ճիգերը համակարգված բնույթ ստացան հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելուց, այսինքն՝ 1878 թվականից հետո: Հայոց բնապատմական միջավայրը բնութագրող հասկացու-

⁴ Տե՛ս Ե.Ղ. Սարգսյան, Ռ.Գ.Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963: Մ.Գ. Ներսիսյան, Պատմության կեղծարարները (հողվածներ և զեկուցումներ), Երևան, 1998, Ю.Барсегов. “Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества”, Документы и комментарии, т.1, М., 2002, с. 11.

⁵ Է.Լ.Դանիելյան, Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում, - «Գլոբուս», վերլուծական տեղեկագիր, Տեղեկատվական անվտանգություն, 2008, N3, էջ 13-15:

թյունների համակարգը իր բնօրրանի մեծ մասում՝ Արևմտյան Հայաստանում ապրող հայության այն անհերքելի վկայությունն է, որի ոչնչացումն իրականացվում էր նրա տիրոջ ֆիզիկական բնաջնջմանն ուղղված պանթուրքական ծրագրին զուգընթաց:

Ուստի, չնայած, որ նույն՝ 1878 թվականին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում հիշատակվում էին «Հայաստանը» և «հայաբնակ գավառները», իսկ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածում մնացել էին միայն «հայաբնակ գավառները», բայց թուրքական պաշտոնական ոլորտները շրջանառության մեջ էին դրել Արևմտյան Հայաստանին պարտադրվող՝ «արևելյան Տաճկաստան», ինչպես նաև «Քուրդիստան»⁶ անվանումները⁷:

1878թ. հետո թուրքական կառավարությունը գաղտնի հրահանգներ էր ուղարկում հայկական նահանգները, թուրք պաշտոնյաներին հրամայելով արգելել Հայաստան անվան գործածությունը⁸: Թուրքական գրաքննության մամլիչը յաթա-

⁶ Նման քաղաքականության արտահայտություններից էր Արևմտյան Հայաստանում քրդական տարրի օգտագործումը օսմանյան բռնակալության նվաճողական քաղաքականության մեջ: Ն. Ադոնցը 1918 թ. հրապարակած իր «Հայկական հարցի պատմական հիմքը և թուրքիայի անկումը» հոդվածում արձանագրել է, որ «Օսմանյան սուլթանները Արևմտյան Հայաստանում կալվածներ էին շնորհում բացառապես քրդական ցեղապետերին... Ընդհանուր առմամբ այս չէր կարող ջնջվել երկրի ողջ տնտեսական և կուլտուրական կյանքը... Բարեբախտաբար, Հայաստանն ամենևին էլ անհիշելի ժամանակներից չէ ըրդերով բնակեցված... Հայաստանում քրդերի գաղթի սկիզբը գնում է Սելիմ առաջինի ժամանակները, երբ Չալդրանի ճակատամարտից հետո, 1514 թվականին, սուլթանը նվաճեց Հայաստանի մեծ մասը և նրա կառավարիչներ նշանակեց քրդերի... 16-րդ դարի սկիզբն ականատես եղավ քրդական ցեղերի Հայաստան գաղթի խիստ մեծացմանը՝ թուրքական կառավարության աջակցությամբ: Ուժեղացնելով քրդական տարրը Հայաստանում, արաբականը՝ Սիրիայում և թուրքականը՝ Փոքր Ասիայում, թուրքական կառավարությունը գիտակցաբար հետամուտ էր քրիստոնյայի վրա մուսուլմանական տիրապետությունը հաստատելու սկզբունքին » (Ն.Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 64): Ներկայումս թուրքական և թուրքամետ տարբեր հրապարակումներում Արևմտյան Հայաստան հասկացության փոխարեն օգտագործվում է «արևելյան Անատոլիա» տերմինը, իսկ թուրքերի դեմ պայքարող քրդերի կողմից թուրքիայից դուրս հրատարակվող քարտեզներում Արևմտյան Հայաստանի մի մասի կապակցությամբ, Հայոց պատմության նեղագիտմամբ, կիրառվում է «Քուրդիստան» անվանումը, դրա մեջ ներառելով հայկական Կորդուքը, Ծոփքը, Սոկքը, Աղծնիքը, Վասպուրականը: Ավելին, արհեստականորեն հնացվում է քրդերի պատմությունը, այն կապելով հայկական Կորդուք երկրամասի հետ (<http://en.wikipedia.org/wiki/Kurdistan>), սակայն, հայկական Կորդուքը, ըստ Պատմահոր՝ Հայկի թռուս Կադմոսի բնակության երկրամասն էր՝ «տունն Կադմեայ» (Սովսես Խորենացի, էջ 34):

⁷ Charles Texier. Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie Paris, première partie, 1842, p. XXVII, Архив Внешней Политики Российской империи, Политархив, 1881-1884, д. 1625. Թե հայկական հարցի միջազգայնացման արդյունքում, որքանով էր քաղաքական շահարկումների առարկա դարձել Արևմտյան Հայաստան հասկացությունը՝ երևում է այդ ժամանակվա անգլիական թերթերի հաղորդագրություններից, որոնց մասին Գ.Գալոյանը գրել է. «1888 թ. հուլիսի 20-ին “Daily News”-ը տեղեկացնում էր, որ անգլիական կառավարության որոշմամբ «Արմենիայի նահանգների համար ընդհանուր հյուպատոս է նշանակվել գնդապետ Չերմսայրը»: Իսկ Լոնդոնի մի այլ թերթ՝ “London Gazette”-ը հրապարակել էր պաշտոնական հաղորդագրություն, որ գնդապետ Չերմսայրը «անգլիական թագուհու հրամանով Քրդստանի ընդհանուր հյուպատոս է նշանակվել» (ԱГИА Грyзии, ф. 480, оп. 1, д. 869, л. 53, Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 400):

⁸ Տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Ավարկներ արևմտահայ մշակութային և հասարակական քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 81:

ղանի դեր էր կատարում հայկական հրատարակությունների նկատմամբ⁹: Այս քաղաքականությունը շարունակվեց ու խորացավ Հայոց ցեղասպանության իրականացման սկզբնական ժամանակաշրջանում՝ 1890-ական թվականների զանգվածային ջարդերի տարիներին, ինչի հետևանքով 1912-1914թթ. «հայկական բարենորոգումների» շուրջ ռուս-թուրքական բանակցությունների արդյունք՝ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրում Հայաստան անվանումը երիտթուրքերի ճնշմամբ «փոխարինվել էր Արևելյան Անատոլիա աշխարհագրական բառակապակցությամբ...»¹⁰:

Հայաստան հասկացության հաջորդական նենգափոխումները Օսմանյան կայսրության՝ այլ ժողովուրդների, ներառյալ Եվրոպայի մասը կազմող բալկանյան ազգերի հանդեպ նախկինում ևս բազմիցս իրականացված հանցագործությունների շարունակությունն էր: Ուստի, առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ Փարիզի խաղաղության վեհաժողովում (1919թ.) դաշնակիցները ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին տված պատասխանում հայտարարեցին, որ իրենց նպատակներից մեկն է՝ «Եվրոպայից դուրս մղել Օսմանյան կայսրությանը, որպես բացարձակապես օտար արևմտյան քաղաքակրթությանը» (“the turning out of Europe of the Ottoman Empire, as decidedly foreign to Western civilization”)¹¹:

Ավելին, այդ շրջանում միջազգային կարգավորման ոլորտ էր մտել նաև Հայաստանի սահմանների հստակեցման հարցը, ուստի «1920թ. ապրիլի 25-26-ին Դաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers), բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ նախագահին երկու խնդրանքով. ա) ստանձնել Հայաստանի մանդատը, բ) իրավարար վճռով (arbitral award) որոշել Հայաստանի և Թուրքիայի սահմանը¹²: Երկրորդ խնդրանքը նաև պաշտոնապես ամրագրվեց Խաղաղության վեհաժողովի նախագահի՝ Ֆրանսիայի վարչապետ և արտգործնախարար Ալեքսանդր Միլերանի 1920թ. ապրիլի 27-ի պաշտոնագրով¹³: Նույն խնդրանքը 89-րդ հոդվածի տեսքով ներառվեց Սևրի դաշնագրի (1920թ. օգոստոսի 10) մեջ և արդեն Հայաստանի, Թուրքիայի, ինչպես նաև դաշնագիրը ստորագրած գրեթե 20 երկրի անու-

⁹ Արդեն այդ շրջանում թուրքական գրաքննության «ծեռքը» իր կնիքն էր դրել, մասնավորապես՝ Մ.Սիրախորյանի «Նկարագրական ուղեորոշիւն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի» գրքի վերնագրի ու բովանդակության վրա: Չնայած այս գրքում նկարագրված են Արևմտյան Հայաստանի նահանգները (Բարձր Հայք, Այրարատ (արևմտյան մաս), Տուրուբերան, Աղձնիք, Սոկք, Վասպուրական և այլն), սակայն «Հայաստան» անվան փոխարեն օգտագործվել են «հայաբնակ» և «արևելյան Տաճկաստան» հասկացությունները (տե՛ս Մ.Սիրախորյան. Նկարագրական ուղեորոշիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի. տեղագրութիւնք, մասն Ա, Կ.Պոլիս, 1884, էջ 11, 20, 32, 71, 96): Թուրք գրաքննության «միջամտությամբ» այստեղ «համատեղվել էին» «հայաբնակ գավառներ» հասկացությունը և Արևմտյան Հայաստան անվան փոխարեն թուրք բռնակալության պաշտոնականացրած՝ «արևելյան Տաճկաստան» նենգափոխումը:

¹⁰ Գ. Գալոյան, ԼՂՎ աշխ., էջ 628:

¹¹ Hacobian A.P., Armenia and the War. An Armenian's Point of View with an appeal to Britain and the Coming Peace Conference with a Preface by the Rt, Hon. Viscount Bryce, New York, <http://net.lib.byu.edu/estu/wwi/comment/Armenia2/Armenia1.htm#3>: Հիշենք Վիկտոր Հյուգոյի խոսքը. «Թուրքերը այնտեղով են անցել. ամեն ինչ ավերված և սգավոր է» (Hugo V., Oeuvres complètes. Poésies I. Paris, 1985, L'enfant, p. 476).

¹² The Treaties of Peace, 1919-1923, vol. I, New York, 1924, p. xxxii.

¹³ Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, Washington, 1936, v. III, p. 780.

նից հղվեց ԱՄՆ նախագահին...: Վուդրո Վիլսոնը իրավարար վճիռը ստորագրեց 1920թ. նոյեմբերի 22-ին: Այն դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցվեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին»¹⁴:

Իր միջազգային իրավական ուժը պահպանող Սևրի դաշնագրի 6-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է Հայաստանին: 88-րդ հոդվածում «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն»: 89-րդ հոդվածով «Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել ԱՄՆ-ի նախագահի որոշմանը՝ իրավարար վճիռն և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմանականացման վերաբերյալ»: 90-րդ հոդվածում ասվում էր, որ 89-րդ հոդվածի համաձայն՝ սահմանագիծը որոշելիս, եթե «հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից...»¹⁵:

Այսպիսով, Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը քողարկող և Հայաստան, Հայկական լեռնաշխարհի և այլ հասկացություններն անտեսող կեղծարարները մոռանում են այն փաստը, որ ժամանակին Օսմանյան կայսրությունը ոչ միայն ճանաչել է Հայաստանի (Հայաստանի առաջին Հանրապետություն և Արևմտյան Հայաստան) գոյությունը, այլև հրաժարվել է նրա տարածքների հանդեպ իր հավակնություններից:

Արևմտյան Հայաստանի հասկացությունը ժխտելու Թուրքիայի փորձերը քաղաքական ոլորտի հետ մեկտեղ, հաջորդ տարիներին ընդգրկել են նաև *հնագիտության, պատմության, պատմական աշխարհագրության և քարտեզագրության, լեզվաբանության, մշակույթի* և այլ բնագավառները՝ աստիճանաբար վերածվելով մոլագար մտասևեռումի:

Արևմտյան Հայաստանը, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը «Արևելյան Անատոլիա» «վերանվանելու» միջոցով թուրք հեղինակները համառո-

¹⁴ Արա Պապյան, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու), Երևան, 2007, էջ 5-6: Ինչպես նշել է Յու. Բարսեղովը, Հայաստանի Հանրապետության (որն այդ ժամանակ ընդգրկում էր նաև Կարսի մարզի և Նախիջևանի տարածքները՝ նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանագծի չափով) տարածքային աճը կազմում էր Օսմանյան կայսրության կողմից գավթված պատմական Հայաստանի տարածքի 40%-ը (տե՛ս Ե.Մ. Բարսեղով, Генциал армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, М., 2002, с. 247 <http://www.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-2/index.htm>): Տես նաև՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի ստորագրած՝ «Հայաստանի և Թուրքիայի միջև վճռված սահմանը» ցույց տվող քարտեզը («Boundary between Turkey and Armenia as Determined by Woodrow Wilson, President of the United States of America»), տե՛ս Ռ.Գալիշեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, էջ 255: <http://www.armenianembassy.org.uk/maps-index.htm>

¹⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Պրոֆ. Ջ.Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 676: Ե. Բարսեղով, նշվ. աշխ., էջ 246.

րեն անտեսում են դարերով հաստատված պատմաաշխարհագրական իրողությունները¹⁶: Հակառակ այդ կեղծիքի, ըստ պատմական սկզբնաղբյուրների՝ Հայաստանը պատմականորեն ամբողջապես ներառում է Հայկական լեռնաշխարհը (հնագույն աղբյուրներով՝ Հայկական լեռներ կամ՝ Արարատի լեռներ), այն եզերող Կուրի հովտով և Սև ծովի ափագիծը հասնող Փոքր Հայքի և Պոնտոսի լեռնաշղթաներով, ու Հյուսիսային Միջագետքի (ներառյալ Հայոց Միջագետքը) հարթավայրերով:

Հայկական լեռնաշխարհ (բարձրագույն գագաթը՝ Մեծ Մասիս-Արարատ, 5165 մ) երկրաբանական-գեոմորֆոլոգիական-աշխարհագրական հասկացությունը գիտական գրականության մեջ կիրառվում է՝ բնութագրելով Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական դիրքը և լեռնագրական կառուցվածքը: Հայկական լեռնաշխարհի հասկացությունը բացարձակապես գիտական է: Գերմանացի անվանի երկրաբան Հերման Աբիխը (1806-1886) ապացուցել է, որ Հայաստանի լեռնագրությունը իր երկրաբանական և գեոմորֆոլոգիական կառուցվածքով, որպես լեռնային աշխարհ ուրույն դիրք ունի Առաջավոր Ասիայում, դրանով իսկ այն անվանել է *Das Armenische Hochland* կամ *Bergland*, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհ¹⁷:

Մինչդեռ, «Արևելյան Անատոլիա» հասկացության հիմքում ընկած՝ «Անատոլի» բառը հունարեն նշանակում է «արևելք», իսկ «անատոլիկոս»՝ «արևելյան»: Բյուզանդական կայսրության բանակաթեմերից՝ «Անատոլիկոնը» գտնվում էր Փոքր Ասիայում՝ Կապադովկիայից, Լիկատնիայից և Կիլիկիայից արևմուտք, իսկ «Արմենիակոն» բանակաթեմը՝ Կողոնիայի, Սեբաստիայի և Պափլագոնիայի միջև¹⁸: Այսինքն՝ «Անատոլիա» անվանումը, ըստ պատմաաշխարհագրական և ներկայիս մասնագիտական գրականության, համապատասխանում է միայն Փոքր Ասիային: Իսկ, քանի որ Փոքր Ասիան գտնվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք, ուստի «Անատոլիա» (իր որևէ հատվածով՝ արևմտյան, կենտրոնական կամ արևելյան) անվան թե՛ քարտեզագրական և թե՛ վարչաքաղաքական կիրառումը չի կարող լինել Փոքր Ասիայի սահմաններից դուրս, դրանով իսկ «Անատոլիա» անվանումը չի տարածվում Հայկական լեռնաշխարհի արևմտյան կամ որևէ այլ մասի վրա:

ԱՄՆ-ում հրատարակված «Համաշխարհային պատմության հանրագիտարանում», Մենուա արքայի (մ.թ.ա. 810-786 թթ.) գործունեության մասին իրավացիորեն նշված է, որ այն ընդգրկել էր «ամբողջ Հայկական լեռնաշխարհը» (“the entire Armenian Highland”) և, որ «Փոքր Ասիան կամ Անատոլիան թերակղզի է՝ ձգվելով Հայկական լեռներից արևմուտք մինչև Էգեյան ծովը, (թերակղզու) հյուսիսում Սև ծովն է, իսկ հարավում՝ Միջերկրական» (“Asia Minor, or Anatolia, is a peninsula stretching westward from the Armenian mountains to the Aegean

¹⁶ «Հայկական լեռնաշխարհը կամ նրա որևիցե մասը երբեք չեն մտել և չեն մտնում Անատոլիայի մեջ, որը զբաղեցնում է Փոքր Ասիայի տարածքը» (А.Зюграбян, Орография Армянского нагорья, Е., 1979, с. 14):

¹⁷ Г.Абих, Геология Армянского нагорья. Западная часть. Орографическое и геологическое строение. ЗКОИРГО, кн. XXI, 1899; Восточная часть, кн. XXIII, 1902. Հմտ. Н.Ф.В. Lynch. Armenia: Travels and Studies. 2 vol., London, 1901.

¹⁸ Տե՛ս The Cambridge Medieval History, vol. IV, The Byzantine Empire, part I, Byzantium and its Neighbours, Cambridge, 1966, տես՝ 193 և 194 էջերի միջև Բյուզանդական կայսրության Փոքր Ասիայի բանակաթեմերի քարտեզը:

Sea, with the Black Sea to the north and the Mediterranean to the south”¹⁹):

Ուշադրություն դարձնելով *Արևմտյան Հայաստան* տեղանվան կապակցությամբ «Արևելյան Անատոլիա» հասկացության անհեթեթ օգտագործման փաստի վրա, ռուսաստանցի հետազոտողները, մասնավորապես՝ Իվան Ռատցիգերը նշում են. «Ներկայումս թուրքական և ադրբեջանական պատմաբանները խուսափում են ոչ միայն օգտագործել այդ տեղանունը, այլև՝ նույնիսկ հիշատակել դրա գոյության մասին: Ընթացք տրվեց իր անհեթեթությամբ ինչ-որ մի ֆանտաստիկ՝ «արևելյան Անատոլիա» հասկացությանը, ինչը, հասկանալի է, թուրքական գյուտ է: Այդ երկրում Բյուզանդիայից ժառանգած շատ անվանումներ կան, որոնք իրենցից ներկայացնում են փոխակերպված հունարեն բառեր և տերմիններ: Օրինակ, «Անատոլիա», այսինքն՝ «արևելք»՝ որպես թուրքական պետության կենտրոնի (նկատի ունի Փոքր Ասիան-Է.Ղ.) անվանում, այնինչ հնարավոր «արևելյան Անատոլիա»-ն կարելի է թարգմանել «արևելյան Արևելաստան» («восточная Востокия») ... մնում է ենթադրել, որ գոյություն ունեն «հարավային Արևելաստան», «հյուսիսային Արևելաստան», և ո՞վ գիտի՝ «արևմտյան Արևելաստան»: Հետաքրքիր է, ինչպիսին կլինի թուրք հետազոտողների արձագանքը, եթե նրանց երկիրը, ... առաջարկեն անվանել «Քառա-Արևելաստան» («Четверо-Востокией») կամ «Եռա-Արևելաստան» («Тетра-Востокией»), կամ ուղղակի՝ «Արևելաստան» («Востокий»)»²⁰: Այսպիսով, ռուսաստանցի հետազոտողը իրավացիորեն արձանագրում է, որ «Արևելյան Անատոլիա» հասկացությունը որևէ կապ չունի *Հայկական լեռնաշխարհի* և մասնավորապես նրա արևմտյան մասի՝ *Արևմտյան Հայաստանի* հետ:

Հայոց ցեղասպանության և հայկական պատմական հուշարձանների ոչնչացման հետ միաժամանակ, թուրքերը իրենց կողմից բռնագավթված Արևմտյան Հայաստանում բազմաթիվ տեղանուններ են ոչնչացրել (Եփրատ, Արածանի, Բերկրի, Մանազկերտ, Կոզովիտ, Արարատ, Սուրբ Գրիգոր և այլն) կամ հիմնովին աղավաղել (Կարասու, Մուրատ սու, Մուրադիե, Մալազգիրտ, Բայազետ, Ադրիդադ, Սիպկոր և այլն)²¹:

Թուրքիան, որ ոչ մի կապ չունի իր կողմից գավթած տարածքների հին և միջնադարյան քաղաքակրթական ժառանգության հետ (բացի այն ավերելուց կամ աղճատելուց), հնագիտական պեղումների վայրերի հին անունների (օրինակ՝ Արկնի-Արդանա՝ Աղձնիքում, Մոս և Բլուր՝ Բարձր Հայքում և այլն) փոխարեն թուրքերեն՝ «Չայնոն», «Մոս Հույուկ», «Պուլուր» և այլ աղավաղված անուններ է դնում շրջանառության մեջ: Այդ կեղծիքը միջազգային գիտական և տեղեկա-

¹⁹ The Encyclopaedia of World History. Peter N.Stearns, General editor, Sixth edition, Boston, New York, 2001, p. 37, 39.

²⁰ И. Ратцигер: "Тетра-Востокия" - ложь и правда об армянском Геноциде (<http://www.regnum.ru/news/1156516.html>).

²¹ Պատմաբան Լ. Սահակյանը, խոսելով հայկական հասկացությունների թուրքական նենգափոխումների մասին, նշում է. «Հայկական տեղանունների վերականգնումները հատկապես կարևոր նշանակություն ունեն մեր օրերում, երբ թուրքական պատմագիտությունը փորձում է կեղծել ու յուրացնել հայկական տեղանունները, ժխտել հայկական հին և միջնադարյան պետականության, հոգևոր մշակույթի գոյությունը Արևմտյան Հայաստանում: (Լ.Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանկան աշխարհագիր մատյաններում, Եր., 2007, էջ 278):

տվական ոլորտներում հնչեցվում է, օրինակ, այսպես. «Չայնոու Թեփեսի վայրը տեղադրված է Արևելյան Անատոլիայում, որը ներկայիս Թուրքիան է: Ճշգրիտ տեղադրությունը... Էրզանի հարթավայրում է: Մինչ այժմ Թուրքիայում հայտնաբերված վաղագույն նոր քարի դարի բնակավայրն է՝ հավանաբար բնակեցված մ.թ.ա. 7250 – 6750թթ.»²²: Այնինչ, խոսքը Արևմտյան Հայաստանի՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող Աղձնիք նահանգի հայկական Արկնի անունից առաջացած Արդանա տեղանվան մասին է, որտեղի հնագիտական նյութը Հայոց քաղաքակրթական ժառանգության անբակտեղի մասն է: Անհրաժեշտ է հիշել, որ մ.թ.ա. III հազ. այդ տարածքը մտնում էր սեպագիր աղբյուրներից հայտնի Արմանում (Արմենիա)²³ անունով Հայոց երկրի կազմի մեջ:

Տեղանունների նենգափոխումներով աղճատելով հնագիտական հուշարձանների պատմական պատկանելության իրողությունը²⁴, թուրք վայ-պատմաբանները կեղծում են հազարամյակների պատմություն ունեցող Հայկական լեռնաշխարհում հայկական քաղաքակրթության անընդմեջ զարգացման ընդհանուր պատկերը:

Ավելին, «Արևելյան Անատոլիա» արտահայտության կիրառման միջոցով, փորձելով ժխտել Թուրքիայի կողմից բռնազավթած Արևմտյան Հայաստանի՝ հայոց Հայրենիքի մասը լինելու փաստը, թուրք զավթիչները և նրանց հովանավորները «հիմք» են ստեղծում նաև այլ կեղծիքների համար: Պատահական չէ, որ հայոց բնօրրանի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, որպես պատմական «Մետաքսի ճանապարհի» արևմտյան մաս, որի զգալի հատվածը Տիգրան Մեծը վերցրել էր իր պաշտպանության տակ²⁵, անտեսված է «Մետաքսի ճանապարհ» անունը կրող արդի միջազգային պատմամշակութային ծրագրում, որն իր խիստ քաղաքականացված տարբերակներով օգտագործվում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ²⁶:

²² http://www.mnsu.edu/emuseum/archaeology/sites/middle_east/cayonu.html

²³ Кифишин А., Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н.э.). – “Палестинский сборник”, вып. 13 (76), 1965, с. 64-66; հմմտ. Иванов Вяч. Вс., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагн. - ՊԲՀ, 1988, N4, էջ 160:

²⁴ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում Բարձր Հայքի Բարբերի և Կարին-Երզրումի շրջաններում կատարվող պեղումների արդյունքները ներկայացվում են որպես «Հյուսիս-արևելյան Անատոլիական հնագիտական նախագծի» նյութեր (The University of Melbourne (ABN: 84 002 705 224) 1994-2001, “The North-Eastern Anatolian Archeological Project”), առանց հայերի և Հայաստանի հիշատակության, հակառակ այն իրողության, որ դրանք հայոց պատմության հատկապես Հայասա-Հայքի թագավորության (մ.թ.ա. XV-XIII դդ.), ինչպես նաև հետագա ժամանակների են վերաբերում (տես՝ Г.Капанян, Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1948, Վ.Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, Ռ. Ղազարյան, Հայասա. քաղաքական և մշակութային պատմություն, Երևան, 2009):

²⁵ Տե՛ս Է.Լ.Ղանիեյան. Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը, -ՊԲՀ, 2006, N2, էջ 3-12:

²⁶ 2008 թ. հունիսի 10-ին Չիկագոյում «Կենտրոնական ասիական արդյունավետության հետազոտական կենտրոնի» և «Պակիստանի ակումբի», ինչպես նաև «Կոմերցիոն կցորդի օֆիսի», Թուրքիայի գլխավոր հյուպատոսության և կոմերցիոն բաժնի, Պակիստանի հյուպատոսի հովանավորությամբ կազմակերպված «Նոր Մետաքսի ճանապարհի բիզնեսային հնարավորությունները» կոնֆերանսում (<http://en.apa.az/news.php?id=50316>) Թուրքիայի ու Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչները լկտիաբար հնչեցրել են բացարձակապես խեղաթյուրված և կեղծ հայտարարություններ Հայաստանի հասցեին: Պատմության մեջ այդպիսի դեպք չի եղել, որ իր հայրենի տարածքները ազատագրող ժողովրդին պայմաններ թելադրի պարտված հակառակորդը: Ավելին, Թուրքիան ինքը պարտավոր է հիշել, որ բնիկ հայերի ցեղասպանության միջոցով զավթել է Արևմտյան Հայաստանը և Հայկական Կիլիկիան, իսկ իր հովանավորած «ադրբեջանցիները» շարունակում են հայկական տարածքների՝ Նախիջևանի, Ուտիքի և Արցախի մի մասի օկուպացումը:

Քաղաքական նպատակներով պատմության կեղծման նույն «մեթոդաբանությունը» պանթուրքիզմի ջատագովները կիրառել են նաև Իրանի «Աղբրեջան» նահանգի ոչ-էթնիկական ծագում ունեցող անվան (Ատրպատական-Ատրոպատենն) հանդեպ: Դրա վկայությունն է Արևելյան Այսրկովկասի մերձկասպյան տարածքում թուրքական բանակի միջոցով (1918 թ. սեպտեմբերին թուրքերը Բաքվում իրագործեցին հայերի կոտորածը)²⁷ կովկասյան թաթարների համար ստեղծված ոչ-իրավական, արհեստածին քաղաքական միավորին տրված «Աղբրեջանական Դեմոկրատական Հանրապետություն»²⁸ անվանումը: Դա արվում էր այն հեռանկարով, որպեսզի բուն, կամ Իրանական Աղբրեջանի հետ նրա «միացմամբ» Թուրքիան ոտք դներ Միջին կամ Կենտրոնական Ասիա: Իսկ երկու տարի անց «Աղբրեջան» անունը թողնվեց այդ նույն տարածքի վրա՝ այս անգամ արդեն խորհրդային կենտրոնի ծրագրած «հեղափոխությանը» Իրանական Աղբրեջանի բռնակցման նպատակով²⁹:

Նույն կեղծարարական մոլուցքով, ժամանակին՝ ԽՍՀՄ-ի օրոք, Բաքվում հրատարակվեցին Հայաստանի պատմական աշխարհագրությունը նենգափոխող պանթուրքական «քարտեզներ», որոնք արտատպվել էին 1944թ. Թուրքաստանում հրատարակված «Իսլամ» հանրագիտարանից: Ալբերտ Մուշեղյանը 1987թ. մայիսին Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ ուղարկեց «աղբրեջանցիների» այդ պարզունակ կեղծիքը մերկացնող մի նամակ: Կեղծարարներին դատապարտող նույն ինստիտուտի պաշտոնական պատասխանը հրապարակվեց «Գրական թերթում» (14.08.1987), ինչը վայնասուն առաջացրեց Բաքվում³⁰:

Ամբողջատիրության գաղափարական մամլիչի տակ, ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունների «համահարթեցմամբ», հայոց պատմությունը արհեստականորեն «երիտասարդացվում» էր, և անգամ խորհրդային հանրությանը պարտադրվում էր հայերի մախնիներին «եկվոր» համարելու, իսկ «աղբրեջանցիների» անցյալը, ընդհակառակը, կեղծիքով և նենգափոխմամբ «հնացնելու»³¹ հայեցակարգային մեկնակետը: Պատահական չէ նաև, որ Արցախյան պատերազ-

²⁷ А.Манасян, Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Ереван, 2005, 15:

²⁸ Իրանի պաշտոնական շրջանակները բողոք ներկայացրին տարածաշրջանում առաջացած այդ արհեստածին քաղաքական կազմավորումը «Աղբրեջան» անվանակոչելու կապակցությամբ (K.Bayat. Storm over the Caucasus, Tehran, 2002, p. 66-67, in Persian, տես՝ R.Galichian, The Invention of History, London-Yerevan, 2009, p. 2):

²⁹ Հայտնի արևելագետ Վ. Բարտոլդը, 1924 թ. Բաքվում կարդացած իր դասախոսություններից մեկի ժամանակ իրեն տրված հարցին, թե՛ «Աղբրեջան ասելով հաճախ նկատի ունեն պարսկական Աղբրեջանը՝ Թերիզ գլխավոր քաղաքով, Արաքս գետից այն կողմ: Արդե՞ո՞ք մենք իրավունք ունենք մեզ անվանել Աղբրեջան...», պատասխանել է. «...Աղբրեջան ընտրված է այն պատճառով, որ, երբ հաստատվում էր Աղբրեջանի Հանրապետությունը, ապա ենթադրվում էր, որ պարսկական և այս Աղբրեջանը կը կազմեն մեկ ամբողջություն» (В. В. Бартольд. Сочинения, т. II (1), Работы по истории Кавказа и Восточной Европы, М., 1963, с. 703):

³⁰ 1989թ. Ա.Մուշեղյանը «Կեղծ-պրական գրականությունը և նրա ջատագովները» հոդվածում ոչնչացրել է թուրք-«աղբրեջանական» պանթուրքական կեղծարարների նենգափոխությունները և ստերը (А. Мушегян, Псевдоалбанская литература и ее апологеты . - «Լրաբեր», 1989, N 8, էջ 16-33):

³¹ Այնինչ, միջինասիական տափաստաններից Առաջավոր Ասիա ներխուժած և թալանով ու ավերածություններով զբաղվող՝ թուրք օղուզ-թուրքական ցեղերը և նրանցից սերած «թաթարները», մարդաբանական, էթնիկական և մշակութային ոչ մի կապ չունեին մի կողմից, բնիկ հայկական՝ Կուրի աջափնյակի և մյուս կողմից՝ Կուրի ձախափնյակի, ինչպես նաև հյուսիս-արևմտյան Իրանի՝ Մարաստանի ու Ատրպատականի հետ և միայն 1936 թվականին խորհրդային կենտրոնի հրահանգով անվանակոչվեցին «աղբրեջանցիներ»:

մում պարտվելուց հետո Ադրբեջանի Հանրապետության «գաղափարախոսները» և նրանց կամակատարները շարունակում են հայկական հուշածանցների ոչնչացումը³² ու բարբառում՝ ազատագրված հայկական հողերի հաշվին Ադրբեջանի Հանրապետության «տարածքային ամբողջության» մասին: Ուստի, Հայոց պետականության հզորացման կարևորագույն պայմաններից է տեղեկատվական պատերազմում օտար քաղաքական ճնշումների դեմ հայազիտության պատմական պաշարի օգտագործումը³³:

Հայաստանի ու հայության հանդեպ արտաքին որոշ շրջանակներից եկող ագրեսիվ քաղաքական և տնտեսական ազդեցությունները ներկայումս նույնպես շարունակում են արտացոլվել տեղաճյուղների նենգափոխման ասպարեզում: Օրինակ՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում գտնվող Արևելյան Հայաստանի օրգանական մասերը՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի

³² XXI դ. սկզբներին, ի շարունակություն գեղասպանական քաղաքականության, ադրբեջանական հանցավոր իշխանությունները իրենց զինվորների ծեռքով ոչնչացրին Հին Տուրախի տասնյակ հազարավոր հիսաբանս խաչքարերից մնացած վերջին խմբերը: Մշակութային եղեռնը իրականացվեց մուրճերով, բահերով և ծակ տեխնիկայով՝ խաչքարերի սրբավայրը վերածելով հրածգարանի (Julfa. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities, Beirut, 2006; "Европейский суд по правам человека рассматривает вопрос уничтожения армянского кладбища в старой Джуге" (<http://news.barev.net/society/1543-Europeiskii-sud-po-pravam-cheloveka-rassmatrivaet-vopros-unichtozhenija-armjanskogo-kladbiwa-v-staroi-Dzhuge.html>): Նույն նպատակով, 2007 թ. Բաքվում հրապարակված «Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները» հակագիտական «գրքի» 7-րդ էջում գետեղված կեղծիք-քարտեզը վերնագրվել է՝ «Արևմտյան Ադրբեջանի» ներկայումս «Հայաստանի Հանրապետություն», քարտեզ» թուրքերի և օղուզների հայրենիքը» (A.Alakbarli. Les Monuments d'Azerbaïjan d'Ouest, Baku, 2007): Ռազմամոլ նպատակներով պետական մակարդակի բարձրացված այս մարտնչող տգիտությունը հովանավորել է «Ադրբեջանի» հանրապետության Մշակույթի և տուրիզմի մինիստրությունը: Հայ անվանի քարտեզագետ Ռ.Պալիջյանը այս «գիրքը» անվանել է «ադրբեջանական ֆանտազիաների նորագույն և ծայրահեղ դեպրեհից մեկը», որի խմբագիրները, հակառակ իրենց «ակադեմիական» կոչման, «սուտը և մոգնումները հասցրել են ծայրահեղության» (R.Galichian, The Invention of History, p. 5-6): «Արևմտյան Ադրբեջան» կեղծիքի «հիմքում» այն նենգափոխությունն է, որ, ինչպես Սարաստանի ու Ատրպատականի հին իրանական ցեղերին, այնպես էլ Կուրի ծախսափնյակի՝ անտիկ սկզբնաղբյուրների հիշատակած «Ալբանիայի» առումով «ալբանացիներին» հայտարարելով իրենց «նախնիներ» և նույնափոխ գառնացանքով, իբրև թե՛ «ալբանական» ներկայացնելով նաև Կուրի աջափնյակի պատմությունը, մտավոր անզորությամբ տառապող «ադրբեջանցի» վայ-պատմաբանները պանթուրաքական մոլագարությամբ հիմնովին կեղծում են պատմությունը: Այնինչ, Կուրի աջափնյակի՝ բնիկ հայկական՝ Հայոց Արևելից կողմանց՝ Արցախի և Ուտիքի հին և միջնադարյան պատմությունը ամբողջական Հայոց պատմության անբաժնելի մասն է: Հայոց թագավորների՝ Տիգրան Երվանդյանի (մ.թ.ա. Vդ.) և, հատկապես Տիգրան II Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) ժամանակներից, ըստ Պատմահոր (Մովսես Խորենացի, էջ 72, 81, 199) Կուրի ծախսափնյա «բուն Աղունքը» («Ալբանիա») եղել է Մեծ Հայքի թագավորության թե՛ քաղաքական ոլորտում և թե՛ ուղղակի ենթակայության տակ, իսկ միջնադարում շարունակել է կրել հայկական պետականության, մշակութային, եկեղեցական, ժողովրդագրական հզոր ազդեցությունը: Այդ իրողության արդյունքներից էր այն, որ, ինչպես նշել է Րաֆֆին. «Իրենց հայրենիքի փրկության գործը առաջ տանելու համար, հայտնեց Օրին (1701 թ. Պետրոս I Մեծ կայսրին-Է.Ղ.) հայերն արդեն պատրաստած ունեն Շամախու կողմերում 17 հազար զինվոր, Ղարաբաղում (Արցախ-Է.Ղ.) 60 հազար, իսկ Հայաստանի պարսկական (Արևելյան Հայաստանի մի մասը-Է.Ղ.) 17 նահանգներից կարելի է հավաքել ավելի քան 100 հազար իռանցի...» (Րաֆֆի. Խամսայի մեխրությունները, Երևանի ժողովաձուռ, հ. 9, Երևան, 1987, էջ 430-431): Շամախու կողմերում հայկական ուժերի զինվորագրվելու փաստը, թե՛ դարերի ընթացքում Կուրի աջափնյակից ծախսափնյակ տարածված հայոց մշակութակերտ կյանքով պայմանավորված ժողովրդագրական վիճակի, և թե՛ Մայր հայրենիքի հետ որդիապես կապված լինելու և Հայոց ազատագրական գործին ծառայելու պատրաստակամության վկայություն է (տես՝ Է.Ղանիեյան. Մովսես Խորենացու ավանդագրույցի Սիսակ-Արտանյան ճյուղի «նորագույնը քննադատության» անվանությունը, - Պատմա-բանասիրական հանդես, 2008, N2, էջ 178-197):

³³ Տես՝ Գ. Հարությունյան. Զաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում, «21-րդ դար», թիվ 2 (12), 2006, էջ 7:

Հանրապետությունը (Արցախի լեռնային մասը՝ ազատագրված տարածքներով³⁴) ներկա միջազգային փաստաթղթերում ներառվել են տարածաշրջանի համար լիովին արհեստական՝ «Հարավային Կովկաս» հասկացության մեջ:

«Կովկաս» հասկացության քաղաքականացման միջոցով Արևելյան Հայաստանը նրա մեջ խցկելու միտումը նույնպես իր պատմությունն ունի: Դեռևս 1915թ. վերջերին Ստամբուլում՝ թուրքական կառավարությունում Կովկասի մահմեդականների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած հավաքում, առաջ էր քաշվել «Անկախ Կովկասի» ստեղծման ծրագիրը: Թուրքիայի հովանավորությամբ, իբր՝ «անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասյան ֆեդերացիայի»³⁵ ստեղծման գաղափարին կառչել էր նաև Վրաստանը: 1916 թվականին Յուրիխում, գերմանական գաղտնի ֆոնդերի ֆինանսավորմամբ գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով հրատարակվեց «Վրաստանը և պատերազմը» գիրքը, որում Կովկասի մահմեդականներին կոչ էր արվում ձեռք մեկնել Թուրքիային, միանալ նրա ցեղակիցների հետ, թուլացնել հայ տարրը, աջակցել Կովկասում օսմանյան տիրապետության հաստատմանը, հասնել Վրաստանի ինքնավարության ճանաչմանը: Ըստ այդ գրքի, «Կովկասի ֆեդերացիան» ստեղծելու նպատակով «կովկասյան բոլոր ժողովուրդները թուրքերի հետ պետք է ռուսներին վտարեն իրենց երկրից»³⁶:

Այս կապակցությամբ Հրանտ Ավետիսյանը իրավացիորեն արձանագրել է, որ «Կովկասյան ֆեդերացիա» ստեղծելու ծրագրով «Անդրկովկասում ևս դրվում էր Հայաստանի վերացման հարցը և հայերը լուծվելու էին մյուս պետական միավորների մեջ», քանզի Թուրքիային վերապահվում էր բռնազավթել Երևանի նահանգի և Կարսի մարզի մի մասը, Վրաստանն էլ զավթելու էր Հյուսիսային Հայաստանը, թաթարներն ու հայերն իբրև թե միասին ստեղծելու էին թաթարա-հայկական խառը գավառներ՝ հարևաններից կամ եվրոպացիներից կազմված միջնորդ խորհրդի հսկողությամբ և ամբողջ «Կովկասը պետք է դրվեր Թուրքիայի տիրապետության տակ»³⁷: Կովկասյան երկրների՝ Թուրքիայի շուրջը միավորման ուրվականը, այս անգամ՝ «կոնֆեդերացիայի» տեսքով, կրկին արծարծվեց 1921թ. կեսերին՝ Լոնդոնում, նախկին անկախ հանրապետությունների վտարանդի ներկայացուցիչների բանակցություններում: Ընդ որում, քենալական Թուրքիան փորձում էր ներկայանալ թելադրողի դերում՝ այս անգամ ծրագրելով գլխավորել «Կովկասի ժողովուրդների միության պայքարը բոլշևիկյան ռեժիմի դեմ»³⁸: Պետք չէ առանձնակի խորաթափանցություն ունենալ՝ հասկանալու համար, որ նույն նպատակով ներկայիս արհեստականորեն անվանակոչված «Հարավային Կովկասում»

³⁴ Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը. վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի: Կազմեց և խմբագրեց Արմեն Այվազյանը, Երևան, 2006: Արևելյան Հայաստանի մասցած մասը՝ Կարսի շրջանը, Մասյադտոս և այլ գավառները, Ուտիքի զգալի մասը, Արցախի մասցած մասը, Նախիջևանը, Գուգարքի հյուսիսային հատվածը՝ ներառյալ Տավախքը (Վրաստանի Հանրապետությունում հայոց Տավախք գավառանունը նենգափոխելով, անվանում են «Տավախթիթի» ձևով) և այլև, դեռևս բռնազավթված են օտարների կողմից՝ նույնպես սպասելով իրենց ազատագրմանը:

³⁵ Տե՛ս Հ. Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 9:

³⁶ Georgia and the War. Zurich, 1916. p. 33-34, տե՛ս Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 9:

³⁷ Գ. А.Аветисян, К вопросу о «Кавказском доме» и пантюркистских устремлениях (<http://poli.vub.ac.be/publi/etni-1/avetisyan.htm>).

³⁸ Տե՛ս Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 466 :

հող է նախապատրաստվում Անկարայի նախաձեռնած «Կովկասի կայունության ու անվտանգության պլատֆորմի» միջոցով³⁹ պանթուրքիզմի ծրագրերի իրականացումը շարունակելու համար:

Մինչդեռ, ըստ հին և միջնադարյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև նոր և նորագույն ժամանակների աշխարհագրական, երկրաբանական և գեոմորֆոլոգիական մասնագիտական գրականության, խնդրո առարկա «Կովկաս» հասկացությունը ընդգրկում է Կովկասյան լեռնաշղթան իր ճյուղավորումներով՝ հարավում հասնելով մինչև Կուր գետից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած շրջանները: Ըստ հույն աշխարհագրագետ Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63–23/24 մ.թ.), Կովկասի հարավային ճյուղավորումները ընդգրկում են Վիրքը և հյուսիսից եզերում են Մեծ Հայքը⁴⁰:

Իր պատմության ընթացքում Հայաստանն աշխարհագրորեն դուրս է եղել «Կովկաս» հասկացությունն ընդգրկող որևէ միավորից (Հյուսիսային, Կենտրոնական կամ՝ Մեծ, Հարավային, Արևելյան և Արևմտյան)⁴¹: Դեռևս 19-րդ դարում Կովկասում և նրանից ավելի հարավ ընկած տարածքներում Ռուսաստանյան կայսրության նվաճումներից հետո ստեղծվել էին վարչատարածքային զանազան միավորներ: Ուստի, ժամանակի ընթացքում Կովկասից հարավ ընկած տարածքներին կայսրության պաշտոնական գրություններում տրվել էր «Անդրկովկաս» (Заквказье) ընդհանուր անվանումը: Դրա հետևանքով, «անդր-Կովկաս», այսինքն՝ Ռուսաստանից հարավ գտնող Կովկասից «այն կողմ» հասկացության մեջ ընդգրկվեց նաև Արևելյան Հայաստանի զգալի մասը:

Ավելին, Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան լեռնային համակարգը՝ Գուգարաց, Ջավախքի, Կեչուտի, Բագումի, Թռեղքի, Աշոցքի, Եղնախաղի, Ջարիշատի, Կարմիր-Փորակի, Սևորոյաց, Կայան, Փամբակի, Արեգունի, Ծաղկունյաց, Գեղամա, Վարդենիսի, Սողքի, Սյունիքի, Բարկուշատի, Բաղաց կամ՝ Արևիքի, Քաշաթաղի, Մռավի, Արցախի, Դիզախյաթի և այլ լեռների ու լեռնաշղթաների ընգրկմամբ արհեստականորեն անվանվեց «Փոքր Կովկաս»: Իսկ խորհրդային իշխանության տարիներին «Անդրկովկաս» տերմինը սկսեց կիրառվել որպես Հայկական, Վրացական և Ադրբեջանական խորհրդային հանրապետությունները ներառող տարածաշրջանի անվանում: Նախքան այդ արհեստականորեն անվանակոչված երկրամասի «ամբողջացումը», տեղի ունեցավ նաև նրա մեջ ներառված հայկական երկրամասերի մասնատումն ու տրոհումը: Այսպես, 1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրի երկրորդ կետում խոսք էր գնում ամբողջ Գարաբաղի մասին⁴²: Իսկ Խորհրդային

³⁹ Ռ.Սաֆրաստյանի և այլ հայ գիտնականների կարծիքով, Թուրքիայի նախաձեռնությունը՝ ստեղծելու Կովկասի կայունության և անվտանգության պլատֆորմ, ոչ մի ապագա չունի և չի կարող ներդրվել (<http://georgien.blogspot.com/2009/02/statement-armenian-turcologist-caucasus.html>):

⁴⁰ The Geography of Strabo, with an English transl. by H. L. Jones, Camb., Mass., London, in eight vol., V, 1954, XI.3.2.

⁴¹ Այլ հարց է՝ ժամանակի ընթացքում հայերի ունեցած քաղաքակրթական մեծ ներդրումը կովկասյան երկրների տնտեսական և մշակութային կյանքում:

⁴² Ст'н Соглашение РСФСР и РА копия 10 августа 1920 г. Н.А.А., ф.200, оп.1, д.588, ч.3, л.173-173 оборот; и д. 529, л. 66, տե՛ս նաև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» 1967, N 3, էջ 46; 1989, N 1, էջ 122-123, տե՛ս նաև՝ Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Под ред. В.А.Микаеляна. Ереван, АН Армении, 1992, с.574-575.

Ադրբեջանի հեղկոմի նույն թվականի նոյեմբերի 30-ի «հայտարարությամբ», ի թիվս Չանգեզուրի և Նախիջևանի՝ միայն Լեռնային Ղարաբաղն էր ճանաչվում Խորհրդային Հայաստանի անբաժան մասը⁴³:

Հայկական Չանգեզուրի, Նախիջևանի և Արցախի հետ նորաթուխ «Ադրբեջանը» ոչ մի կապ չունեք, որպեսզի դրանց նկատմամբ որևէ իրավական քայլ ձեռնարկելու լիազորություն ունենար: Փաստորեն, այդ «հայտարարությամբ», բուլղարիկյան կենտրոնի հովանավորությամբ, Բաքվի խորհրդային իշխանությունները գաղտագողի ծրագրում էին բռնագավթել Արցախի դաշտային մասը, ինչպես նաև Հյուսիսային Արցախը Ուտիքի, (Գարդմանք, Գանձակ և այլն) մեծագույն մասով:

Իսկ ահա Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի և նրա շարունակությունը դարձած Կարսի՝ 1921թ. հոկտեմբերի 13-ի ապօրինի «պայմանագրերով»⁴⁴ ու նույն թվականի հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշումով Արևելյան Հայաստանից խլվեցին իր մյուս բնիկ տարածքները: Կարսի մարզը, Մուրմալուի և Օլթիի (Բողխա) գավառները, Արդահանը, Սարիղամիշը, Կադզվանը և այլ տարածքները բռնակցվեցին Թուրքիային: Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը բռնակցվեցին Ադրբեջանական ԽՍՀ-ին, Չավախքի Ախալքալաքի գավառը և այլ հայկական տարածքներ՝ Վրացական ԽՍՀ-ին⁴⁵:

Պատմաաշխարհագրական հասկացությունների աղավաղումների բացասական հետևանքները չեն սահմանափակվել միայն Հայաստանի տարածքների բռնագավթման իրողություններով: Բացի քարտեզագրությունից, դրանք իրենց խիստ բացասական ազդեցություն են գործել նաև գիտության այլ բնագավառների վրա (հնագիտություն, լեզվաբանություն, մշակութաբանություն, մարդաբանություն): Օրինակ, համեմատական լեզվաբանության մեջ ընդունված դասակարգմամբ Կովկասյան լեզվաընտանիքին են պատկանում քարթվելական կամ՝ «հարավկովկասյան», արխազա-ադրդական կամ՝ արևմտակովկասյան, վայնախական կամ՝ կենտրոնական-կովկասյան, դադաստանյան կամ՝ արևելակովկասյան լեզուները⁴⁶: Աղավաղելով Հայկական լեռնաշխարհի էթնո-մշակութային պատկերը, Թ.Գամկրելիձեն և Վ.Իվանովը, ընդունել են, որ «կուր-արաքսյան» կոչվող հնագիտական մշակույթը ընդգրկում էր «Արևելյան Անատոլիան», «Հարավային Կովկասը» և Իրանական սարահարթը «ներառող մշակութային արեալը», և իրենց գրքում գետեղված քարտեզում, պատմաաշխարհագրական նենգափոխված պատկերացումներով «նախաքարթվելերենի» տարածման ոլորտում նշել են Կովկասից մինչև Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան տարածքները՝ Գուգարքը, Այրարատի գգալի մասը (ներառյալ Արարատ-Մասիս լեռան շրջանը), Արածանիի ակունքները, Վանից հյուսիս-արևելք ընկած շրջանները, ինչպես նաև՝ Նա-

⁴³ Տե՛ս Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 370: Ա. Սևնաթյան, Ղարաբաղյան հիմնախնդիր. փաստարկներ և փաստաթղթեր, Ե., 2005, էջ 13:

⁴⁴ Ա. Պապյան, նշվ. աշխ., էջ 21, 28:

⁴⁵ Տե՛ս Ա.Մելքոնյան, Տախիքը XIX դարում և XX դ. առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 285-289, 295-330:

⁴⁶ Т.В.Гамкредлидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, с. Liv.

խիջևանը, Մյունիքը, Ուտիքն ու Արցախը: Արդյունքում՝ այդ քարտեզում հայոց լեզվի «նախնական կրողների» կամ այսպես կոչված «նախահայերենի» (նույնպես սխալ տերմին) համար «թողնված է» միայն Վանա լճից հյուսիս՝ մինչև Արաքսի (Երասխ) հովիտը տարածվող շրջանը⁴⁷: Այսպիսով, «Հարավային Կովկաս» արհեստածին հասկացությունը, ինչպես և «Արևելյան Անատոլիան» դարձել են յուրա-հատուկ «ցատկահարթակներ»՝ Հայաստանի տարածքների գավթումը կեղծիքներով քողարկելու և նրա մշակութային ժառանգության յուրացման համար:

Ակնհայտ է դառնում, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածը «Հարավային Կովկաս» համարելու ծրագիրը ծագել ու հունցվել է «Կովկասյան ֆեդերացիայի» գաղափարի պայթյունավտանգ խմորումներից: Իսկ «աղբբեջանցի-թուրք» վայ-քարտեզագիրների և քաղաքագետների՝ վրաց որոշ կեղծ-գիտական շրջանակների մասնակցությամբ, հայկական հողերի նկատմամբ հավակնություններն ավելի քան ակնբախ են դարձնում իբր՝ «տարածաշրջանային համագործակցության» համար «Հարավային Կովկաս» աշխարհագրական անվանմանը հետևելու ողջ վնասակարությունը՝ հայ ազգի և հայոց պետականության համար⁴⁸:

Այսպիսով, *Հայկական լեռնաշխարհ* գիտական հասկացության փոխարեն «Արևելյան Անատոլիա» և «Հարավային Կովկաս» տերմինների բռնագրոսիկ և հակագիտական կիրառումը ծառայեցվում է մի դեպքում՝ Արևմտյան Հայաստանում ցեղասպանությամբ ու մինչ օրս իրականացվող՝ մշակութային եղեռնով քաղաքական բռնագավթման շարունակմանը, իսկ մյուս դեպքում՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն տարածաշրջանային կառույցների կախյալ կցորդը դարձնելու նպատակներին:

Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Նախիջևանում և իրենց ազատագրմանը սպասող հայկական մնացած տարածքներում թուրք և «աղբբեջանցի» ոճրագործները անվանափոխել ու անվանափոխում են լեռների, գետերի, գավառների, քաղաքների, գյուղերի բնիկ հայկական անունները: Հայկական մշակույթը, կրթությունը, հուշարձանները և կյանքի այլ ոլորտները աղավաղվում են մաս Կրաստանի իշխանությունների վարած ազգային խտրականության քաղաքականության հետևանքով՝ Կրաստանի Հանրապետությանը բռնակցված հայկական Գուգարաց աշխարհի մի շարք հյուսիսային գավառներում⁴⁹:

Հայոց աշխարհը շենացրած և համաշխարհային քաղաքակրթության գանձարանը մեծագույն արժեքներով հարստացրած հայ ժողովուրդը մեր նախնիների հայրենանվեր գործունեության ու սխրագործությունների և Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի ոգեղեն հիշատակով՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Հայկական Կիլիկիան մի-ավորող Հայրենիքի բնիկ տերն է, որի պաշտպանության առաջադրանքի գիտական ասպարեզը ներկա հանգրվանում ձեռք է բերում առաջնահերթ նշանակություն:

⁴⁷ Т.В.Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 893 и 956-957 էջերի միջև թարգմանք:

⁴⁸ Տես՝ Э.Даниелян, Топонимика на копье, “Голос Армении”, 31 марта, 2006, Ե.Ղակիեյան, «Հարավային Կովկաս» և «Արևելյան Անատոլիա» տերմինների քաղաքականացված սխալ կիրառումը, «Ազգ», 14 հունիսի, էջ 4, 2006:

⁴⁹ Տես Ս.Վարպետյան, Տավախը, Երևան, 2006, էջ 21-22, “В Джавахке уничтожается все армянское”. – “Ноев Ковчег”, N 11 (134), 2008, с.3-4, “В Грузии осуществляется геноцид армянского культурного наследия”, PanArmenian.Net, 26.10.2008. (<http://news.barev.net/policy/1541-V-Gruzii-osuwestvljaetsja-genocid-armjanskogo-kulturnogo-nasledija1.html>)

Եզրակացություններ

1. Հայկական լեռնաշխարհում պատմականորեն ձևավորված հայկական տեղանունները տեղաբնիկ հայ ժողովրդի բնապատմական և էթնո-հոգևոր միջավայրը բնութագրող արժեքային համակարգի խորհրդանիշերն են:

2. Հայաստանի մասին Հայոց ազգային աշխարհընկալման հիմքում են հայկական տեղանունները, որոնց անադարտությամբ է պայմանավորված ամբողջական Հայրենիքի գաղափարը և նրանով դեկավարվող ազգային վարքականոնը:

3. Հայկական տեղանունները (աշխարհների՝ նահանգների, գավառների, բնակավայրերի, լեռների, լճերի, գետերի, լեռնանցքերի և այլն) վկայված են սեպագիր (մ.թ.ա. III-I հազ.), անտիկ ու միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներում և ընդունված համաշխարհային պատմագիտական ու աշխարհագրական գրականության մեջ:

4. «Որդեգրելով» հայկական տեղանունները կեղծելու և շինծու-թուրքականով փոխարինելու ուղին, Թուրքիայի և Ադրբեջանի «պատմագիտությունը» և նրանց համախոհները, փորձում են ժխտել հայկական հին և միջնադարյան պետականության հոգևոր և նյութական մշակույթի գոյությունը Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Նախիջևանում, Ուտիքում և մնացած՝ դեռևս ազատագրման սպասող հայկական տարածքներում, ինչը նրանց նախորդների ցեղասպանական ծրագրերի շարունակությունն է:

5. Հայկական տեղանունների աղավաղումը, կեղծումը և ոչնչացումը թշնամական կողմը իրականացնում է իրար լրացնող «մեթոդներով», որոնք կիրառվում են ներքին և արտաքին բնագավառներում:

6. Թուրքիան, կեղծելով աշխարհահռչակ Արարատ-Մասիս լեռան հայկական անունը և փոխարենը օգտագործելով շինծու թուրքերեն մի անվանում, ձեռնոց է նետել քաղաքակիրթ աշխարհին՝ փորձելով ոչնչացնել Սուրբ Գրքում գրանցված սրբազան լեռան անունը:

7. Տեղանունների աղճատումով և նենգափոխմամբ Թուրքիան հետապնդում է նաև նվաճված հայկական տարածքների նկատմամբ թուրքերի մեջ արհեստականորեն «սեփականատիրոջ» գաղափարը «ներարկելու» զառանցանքը:

8. Քանի որ միջազգային շրջանառության մեջ են դրվել հայկական պատմական ժառանգությունը և Հայկական լեռնաշխարհի ամբողջական պատկերը աղավաղող բազմաթիվ տեղանուններ, հայությունը իրեն հայտարարված «քարտեզագրական պատերազմի» մարտահրավերներին պետք է հակահարված տա իր գիտական և պետական միջոցների ողջ զինանոցով:

9. Հայկական լեռնաշխարհի ամբողջական տարածքում հայկական տեղանունների վերականգնումը միջազգային ասպարեզում Հայոց պետականության առաջնահերթ խնդիրն է. Հայաստանին վերաբերող միջազգային փաստաթղթերում և գիտական գրականության մեջ անհրաժեշտաբար պետք է կիրառվի հայկական տեղանվանական տերմինաբանությունը:

11. Հայաստանին հայտարարված «քարտեզագրական պատերազմի» պայմաններում միջազգային համագործակցության ասպարեզում ՀՀ-ն և ԼՂՀ-ի դիվանագիտական գերատեսչությունները պետք է բացատրական աշխատանք ծա-

վալեն Հայաստանի տեղանունների վերաբերյալ տեղեկությունները գիտականորեն ճիշտ ներկայացնելու նպատակով:

12. Արևմտյան Հայաստանի և օտարների կողմից դեռևս զավթված մյուս հայկական տարածքների տեղանունների աղավաղման, նենգափոխման և ոչնչացման փաստերը ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի հայկական կազմակերպությունների կողմից միջազգային հանրությանը պետք է ներկայացվեն որպես հակահայկական ուժերի ցեղասպանական քաղաքականության շարունակություն:

Summary

ARMENIA AND ARMENIAN TOPONYMS: The scientific assignment of the Armenian natural historic environment's protection

Eduard L. Danielyan

The cognition of the more than five millennia-old Armenian history is one of the roots feeding Armenian political thought and the protective aura of Armenian ethno-spirituality. The national activities in the political, spiritual-cultural, scientific-educational and ideological spheres are based on the Fatherland's natural perception fastened by historic memory and national psychology.

After the Armenian Genocide the Turkish vandals continued genocide by the destruction of the Armenian cultural heritage - historic monuments, as well as falsifying Armenian toponyms and fabricating “new” ones in Turkish (against all moral and legal norms and canons of human behavior and international legal obligations, challenging the civilized world, they have even infringed on the biblical name of Mt.Ararat-Masis). They are aiming at erasing the truth about Western Armenia and Armenian Cilicia from historic memory. Despite the Pan-Turkic genocidal policy, some articles of certain international documents (The Severs Treaty and “The Arbitral Award on Turkish-Armenian Boundary by Woodrow Wilson, the President of the United States of America”) are devoted to Armenia (see also the map: „Boundary between Turkey and Armenia as Determined by Woodrow Wilson, President of the United States of America“).

The Turkish occupants continue to change the proper Armenian toponyms in Western Armenia. They try to disguise the truth about the Armenian Genocide – the crime against humanity and civilization, and to “appropriate” the Western Armenian lands occupied by them. The same is committed by the Azerbaijani criminal authorities.

The world-famous scientific, political and spiritual figures have spoken about the Armenian contribution to the world civilization. D.M.Lang called his book “Armenia: Cradle of Civilization”. The Armenian Nation who enriched the Armenian and the world treasuries of culture with great civilizational values is the original owner of Great Armenia, Armenia

Minor and Armenian Cilicia - the Armenian Fatherland. The Armenian victory in the Artsakh war against the Azerbaijan Republic's aggression, and, the result of the victory - the liberation of the Armenian lands in Artsakh - NKR (mountainous part) and its inseparable liberated native territories - demonstrate the will and belief of the Armenian people to liberate the rest of the Armenian Fatherland (Western Armenia, Armenian Cilicia and, in Eastern Armenia, - Nakhijevan, the rest of Artsakh and Utik, Javakhk and others).

The historic heritage's protection is the task of the Armenian information security in which the toponyms, reflecting the characteristics of the national historic environment and identity, are of fundamental importance. The historic-geographic terminology of the Armenian Highland, constituting the entity of the Armenian toponymy, belongs to the pivotal layer of Armenian ethnic-linguistic thinking. The Armenian toponyms' protection has ethno-protective significance and as a vital sphere of the Armenian national security must be the priority mission of the RA, NKR and the Armenian Diaspora organizations.